

ՁԵԿՈՒՑԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ 2014
ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՄԱՍԻՆ

Հարգելի համագյուղացիներ և հյուրեր, թույլ տվեք ձեր ուշադրությանը ներկայացնել 2014 թվականի 1-ին կիսամյակում գյուղապետարանի աշխատակազմի, իմ և ավագանու կողմից կատարված աշխատանքները:

Նախապես ցանկանում եմ ձեզ տեղեկացնել, որ համայնքի բնակչության թիվը կազմում է 1830, տնտեսությունների թիվը՝ 307:

2014 թվականի 1-ին կիսամյակում Ջրարբիի գյուղական համայնքի ղեկավարը և համայնքի ավագանին կատարել է մի շարք աշխատանքներ, որոնք ուղղված են եղել նպաստելու համայնքի բնակչության բարեկեցության ապահովմանը և համայնքի ներդաշնակ զարգացմանը և այդ աշխատանքների մասին ամբողջական և հավաստի տեղեկատվություն է տրամադրվել համայնքի բնակիչներին:

Գյուղապետարանի աշխատանքները 1-ին կիսամյակում եղել է առավել բաց, թափանցիկ բնակիչները հնարավորություն են ունեցել սպառնիչ տեղեկանալ գյուղապետարանի գործունեության մանրամասներին:

Համայնքում գործում է մանկապարտեզ, հաճախում են 56 երեխա: Տարեսկզբին հաստատված նախահաշվի համաձայն համայնքի բյուջեից որպես ընթացիկ անհատույց վճարներ՝ ծառայության մատուցում՝ «Ջրարբի համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը 1-ին կիսամյակում հատկացվել և ամբողջությամբ փոխանցվել է 3600000/ երեք միլիոն վեց հարյուր հազար/ դրամ գումար: Մանկապարտեզի աշխատանքները պարբերաբար վերահսկվում են գյուղապետարանի կողմից: Գյուղապետարանը հնարավորինս աշխատում է հոգալ մանկապարտեզի խնդիրները:

Հունիսի 1-ին՝ երեխաների պաշտպանության օրվա կապակցությամբ համայնքում կազմակերպվեց երկու ժամյա միջոցառում և հրավիրված էին հինգ հեքիաթի հերոսներ: Միջոցառման կազմակերպման համար փոխանցվել է 55000/ հիսունհինգ հազար/ դրամ:

2014 թվականի 1-ին կիսամյակում համայնքի ավագանու որոշմամբ համայնքում կազմակերպվել են մի շարք միջոցառումներ, 1-ին միջոցառումը, որի ընդհանուր գումարը կազմում էր 558000/հինգ հարյուր հիսունութ հազար/ դրամ, գյուղապետարանը կազմակերպեց Կանանց միջազգային օրվա՝ մարտի 8-ին կապակցությամբ:

Միջոցառման ժամանակ համայնքի թվով 70 կին թոշակառուներից յուրաքանչյուրին տրամադրեց 5000 / հինգ հազար / դրամ արժողության նվերներ: Նույն օրը՝ միջոցառման ժամանակ գյուղապետարանը համայնքի միջնակարգ դպրոցի ուսուցիչների թվով 25 կին և մանկապարտեզի թվով 11 կին աշխատակիցներին նույաես նվիրեց 5200 / հինգ հազար երկու հարյուր / դրամ արժողությամբ նվերներ: Տոնի առթիվ նվերներ տրամադրվեց նաև համայնքում միակ կին ազատամարտիկին և միակ կին ավագանու անդամին, բուժկետի 2 աշխատակիցներին և փոստային կապի բաժանմունքի աշխատակցին:

2-րդ միջոցառումը կազմակերպվեց Հաղթանակի և խաղաղության տոնի՝ Մայիսի 9-ի կապակցությամբ: Միջոցառմանը հրավիրված էին Ղարաբաղյան պատերազմին մասնակցած համայնքի ազատամարտիկները:

Միջոցառման կազմակերպման համար համայնքի բյուջեից հատկացվեց 160000 /մեկ հարյուր վաթսուն հազար/ դրամ գումար:

Միջոցառում կազմակերպվեց նաև Վերջին զանգի կապակցությամբ: Համայնքի թվով 12 շրջանավարտների նվերների համար գյուղապետարանը հատկացրեց 100000 /մեկ հարյուր հազար/ դրամ:

1-ին կիսամյակում գյուղապետարանը 183000 / մեկ հարյուր ութսուներեք հազար/ դրամ հատկացրեց համայնքի միջնակարգ դպրոցի բոլոր դասարաններին պատմամշակույթային օջախներ այցելելու և էքսկուրսյաներ կազմակերպելու համար:

2014 թվականին 53560 /հիսուներեք հազար հինգ հարյուր վաթսուն/ դրամ հատկացվեց գյուղապետարանին պատկանող ՎԱԶ2106 մակնիշի ավտոմեքենան գազով լիցքավորելու համար:

Համայնքի ավագանու որոշմամբ ամսական 900000 /ինը հարյուր հազար/ դրամի պայմանագիր է կնքվել Ջրարբի համայնքի բնակիչ Ս.Բաղդասարյանի հետ, ըստ որի համայնքում յուրաքանչյուր շաբաթ, շաբաթական երկու անգամ, իրականացվում է աղբահանման աշխատանքներ, որի արդյունքում մաքրվել են համայնքի փողոցներն ու մայթերերը: Աղբահանման աշխատանքների դիմաց վարձատրությունն ամբողջությամբ կատարվում է գյուղապետարանի միջոցներով: 2014թվականի 1-ին կիսամյակում աղբահանման աշխատանքների դիմաց վճարվել է 490800/ չորս հարյուր իննսուն հազար ութ հարյուր / դրամ գումար:

2014թվականի առաջին կիսամյակում կառուցվեց ֆոտոլի դաշտ, որի համար ծախսվել է 1404500/մեկ միլիոն չորս հարյուր չորս հազար հինգ հարյուր/ դրամ:

2014թվականի առաջին կիսամյակում համայնքի ավագանու որոշման որպես ֆինանսական աջակցություն համայնքի բյուջեից 150000 / մեկ հարյուր հիսուն հազար / դրամ հատկացվեց « Արմավիրի մարզի երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպության:

1-ին կիսամյակում համայնքի թվով 5 ընտանիքների իրենց դիմումների համաձայն տրամադրվել է սոցիալական օգնություն՝ ընդամենը 150000 / մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ:

2009 թվականից համայնքում ձևավորվել է մի ավանդույթ, ըստ որի հարազատին կորցրած ընտանիքներին տրամադրվում է 50000/ հիսուն հազար/ դրամ օգնություն, 2014 թվականի 1-ին կիսամյակում հարազատին կորցրած 3/երեք/ ընտանիքի տրամադրվել 150000 /մեկ հարյուր հիսուն հազար / դրամ օգնություն:

2014թվականի 1-ին կիսամյակում բնակիչների պահանջով գրվել է 266 տեղեկանք:

2014 թվականի 1-ին կիսամյակում տեղի է ունեցել 5 ավագանու նիստ, որտեղ քննարկվել են համայնքին վերաբերող տարաբնույթ հարցեր, ինչպես նաև սոցիալական ապահովության կարիք ունեցող բնակիչների դիմումները:

2014 թվականի Ջրարբի բյուջեով հաստատվել է 30046100 / երեսուն միլիոն քառասունվեց հազար հարյուր / դրամի եկամուտ, մուտքագրվել է 16100727 / տասնվեց միլիոն հարյուր հազար յոթ հարյուր քսանյոթ / դրամ, որը կազմում է ընդհանուր բյուջեի 53.58 %-ը:

Պետական բյուջեից համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների և մուտքագրված գույքահարկի, հողի հարկի, այլ ոչ հարկային

եկամուտների , վարձակալական հողի հարկի և տեղական տուրքերի գանձման արդյունքում մուտքագրվել են հետևյալ եկամուտները՝
 2014 թվականի 1-ին կիսամյակում մուտքագրվել են հետևյալ եկամուտները՝

Գույքահարկ շենքերի և շինությունների և փոխադրամիջոցների
 3150.0 - 2519.8 - 79.99%

Գյուղ. նշ. հողերից հողի հարկ 2330.0 - 1508.8 - 64.75%

Վարձակալակնա հողի հարկ 210.0 – 68.9- 32.84%

Տեղական տուրք 250.0 - 0 - 0%

Դոտացիա 24006.1 - 12003.1 - 50.00%

Տեղական վճար նախատեսվել է 100.0 հազ.դրամ , սակայն 1-ին կիսամյակում չի հավաքագրվել:

2014 թվականի 1-ին կիսամյակում կատարվել են հետևյալ ծախսերը՝

Աշխատավարձի համար ծախսվել է 8810600 / ութ միլիոն ութ հարյուր տասն հազար վեց հա / դրամ

Էլեկտրաէներգիայի համար ծախսվել է 308246 / երեք հարյուր ութ հազար հինգ երկու հարյուր քառասունվեց/ դրամ,

Կապի ծառայությունների համար ծախսվել է 40000/քառասուն հազար/ դրամ:

Ներքին գործուղման համար ծախսվել է 40000/ քառասուն հազար / դրամ

Համակարգչային ծառայությունների համար ծախսվել է 145600/մեկ հարյուր քառասունհինգ հազար վեց հարյուր / դրամ

Ներկայացուցչական ծախսերի համար ծախսվել է 658000/ վեց հարյուր հիսունութ հազար / դրամ

Ընդհանուր ծառայությունների համար ծախսվել է 153800/ մեկ հարյուր հիսուներեք հազար ութ հարյուր / դրամ.

Մասնագիտական ծառայությունների համար ծախսվել 8333/ ութ հազար երեք հարյուր երեսուներեք / դրամ.

Գրասենյակային նյութերի համար ծախսվել է 183700/ մեկ հարյուր ութսուներեք հազար յոթ հարյուր / դրամ

Տրանսպորտային նյութերի համար ծախսվել է 81460/ ութսունմեկ հազար չորս հարյուր վաթսուն / դրամ

Կենցաղային և հանրային սննդի համար ծախսվել է 35000/ երեսունհինգ հազար / դրամ

Շենքերի և շինությունների կառուցման համար ծախսվել է 440000/ չորս հարյուր քառասուն հազար / դրամ

Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման համար ծախսվել է 200000/ երկու հարյուր հազար / դրամ

Վարչական սարքավորումների համար ծախսվել է 1166000/մեկ միլիոն հարյուր վաթսունվեց հազար / դրամ

Ջրարբի համայնքում առկա և լուծման անհրաժեշտություն ունցնող ծախսատար խնդիրները հետևյալն են՝

- 1 Սշակույթի տան վերանորոգում.
- 2 Համայնքի փողոցների ասֆալտապատում
3. Դպրոցի շենքի վերանորոգում:

Ջրարբի համայնքի ղեկավար՝



Ղ.Ղազարյան